ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 29-Լ **«20» մարտի 2024 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԻՐԱՊԵՏՈՂ ԱՆՁԱՆՑ ՑԱՆԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 13-րդ ենթակետով և 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հաստատել՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարության) սոցիալական ցանցերի էջերի, դրանց գրանցման և շահագործման նպատակով օգտագործվող էլեկտրոնային փոստերի, հեռախոսահամարների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի մուտքանունների և գաղտնաբառերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սահմանել, որ

1) սույն հրամանի 1-ին կետով հաստատված ցանկում ներառված սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղարի կողմից թարմացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ.

2) սոցիալական ցանցերի էջերի ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաշվառվում և պահպանվում

են Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունում.

3) ադմինիստրատիվ օգտագործողի անունները և գաղտնաբառերը ենթակա են պարտադիր փոփոխության մինչև սոցիալական ցանցերի էջերը շահագործող անձանց փոփոխությունը կամ պաշտոնավարման դադարեցումը.

4) նշված տեղեկատվությունը հանդիսանում է ծառայողական գաղտնիք:

2. Սույն հրամանի կատարումը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի մամուլի քարտուղարին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**